



ՄԱԿՍԱՅՔ ՄԱՍԵԱՅ Զ Ա Յ Ն ԸՆԿԵՐԱՍԻՐԱԿԱՆ

10 ՄԱՅԻՍ

1864 Բ. ՏԱՐԻ

թիւ 19

Խ Ա Բ Է Ռ Ի Թ Ի Ւ

Ժամանակ հանդիսի կրօնական խորութեան պաշտպանող կրակոտ խմբադիրը որքան ալշուտ խոր վարպետն անցաւ, արդարեւ ասի յառաջագիմութեան եղակի օրինակ մի է, և արժանի հրատարակման։

Լոյօլյի թոռան վեց ամիսէ հետէ աշակերտութիւն ընող Տէրտէրեան Պ. Ստեփանը իւր հանդիսին 36^ր թուով երբ կը խօսի Կ. Տ. Վ. Վ. ին գէմ անօրինակ ջանք մը ունի, աս սկզբունքն ալ տարածելու թէ ձառվեական եկեղեցին ուղղափառ է, թէ մեր և յիշեալ եկեղեցւոյ մէջ մեծ տարբերութիւն չի կայ և թէ ինչպէս մեր նոյնապէս ալ Պատականութեան մէջ մարդ կրնայ փրկութիւն։

Տէրտէրեանի այս ըսածներուն գէմ մենք թէեւ շատ ըսելիք ունիմք, սակայն որովհեան արդէն Պարիկոր Եսաւանեանը այս կէտիս վրայ իւր նոր Հրատարակած մէկ տետրակառ բաւական խօսած է, ուստի այս մասին մեր կողմանն բան մը չըսելով աս շափս միան կը հարցնեմք

Լուսուորչանութեան հարազատ զաւակին թէ իւր վերոյիշեալ սկզբունքները բաւական չե՞ն մեր գաւառաբնակ եղայլները Պատականութեան յարեցնելու։ Փափազեան քումիտք սա չէ^ր, որ աղէտ հասարակութիւնը համոզեա թէ տարբերութիւն չի կայ ՚ի մէջ Լուսուորչականութեան և Պատականութեան և ասանկով զանոնք շատ դիւրու թեամբ ձուով մէական ընես. տեսէք ազգայինք կրօնական իրարութիւն կարեւոր է պօտացող սա Ճ'իզուիթութիւնը և կուզէք նէ դեռ ևս հաւատացէք թէ Փափազեան կրօնասէր է։

Ես կրսեմ թէ մենք ամեն կերպ կրօնից հետեւողները սիրելու եմք և նոցա կրօնական գաղափարները յարգելու եմք, բայց ոչ երբէք կինամ ընդունիլ թէ իմ եկեղեցիւս դուրս ինչ համար փրկութիւն կայ. Պ. Փափազեանը ինչո՞ւ այսպէս չի խօսիր, և ինչո՞ւ իւր թօլքարովութեամբ զօրութիւն կու տայ Պատականութեան ՚ի մեջ ճարակելուն։

Եշխարհիս մէջ ամենէն աւելի անկից վախնալու է որ ինքինքը կրօնասէր կը ցուցնէ և կրօնական խորութիւն պէտք է կը պօռայ։

ՄԱՆՈՒԵԼ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԳԱՐՈԶԸ

(See p. 48)

Պարգևային աղջը իւր ծնունդ առաջ օշակն հետէ որ կը բաղպէ իւր այն անգամներուն գէմ, որոնք հաւասարութեան իրաւունքն չեն զի ճանշալով կամ ճանշնալ չուղելով այս կամ այն միջոցներով գտնազնն տեսակ հարստահարութիւններ կը բարեաց առջեւն առնելու եւ անհատական իրաւունքն սպաշտականելու համար է որ ամեն կրօնի հիմնագիր աշխատեցն և 'ի պահանջել յարկին 'ի սէլն մարդկութեան նաև հատակուեցան։ Ուշ որ այս ըսածնիս ճշմարիտ է առանց խանձերնուս գէմ՝ մեղանչելու կարող եմք ըսել թէ՝ կրօնի ամեն պաշտօնեայք առ հասարակ ներքին թշնամիք են կրօնի և մարդկութեան, որովհետեւ ասոնց ընթացքը այնքան հեռուի է իւրեանց քարողած կրօնին հիմնագրած ընթացքին և պատուիրանացը, որ մարդ աւելի համարձակութեամբ կրնայ ըսել թէ ասոնք առերես հետեղ և պաշտօնեայ ձեւնալով կրօնից և կրօնից հիմնագրաց, նոյս աշխատութեանց և քարողութեամնց ներգործութիւնը փակացնելու եւ տկարացնելու կաշխատին 'ի մաս հանրական և անհատական իրաւանց։

Թաղողակ կրօնական այլ և այլ գրութիւններ՝
ըլ՝ Քրիստոնէական կրօնը ինքնին հասարա-
կութեան, ընկերական և անհատական իրա-
ւանց Աստուածային պաշտպանութիւնն է,
Քրիստոս որդին Աստուածոյ ուրիշ բան չեքա-
րողեց աշխարհիս մէջ բաց ՚ի եղբայրասիրութե-
նէ և հաւասարութենէ սիրեցէք ըստ «մէ-
կըզմէկ որպէս և ես զձեզ սիրեցի ո նմանապէս
« ծախէ՛ ո ըստ հաբուսին « բոյզը ստացուած-
քրդ և աղքաներուն տուր ո»:

Քըլիսոսի բոլըք քարոզութիւնները գրե-
թէ ասոնց նման խօսքեր կը պարունակեն և
բնաւ տեղ մը չեմք գաներ նորա քարոզութեանց
մէջ որ կերպիւ մը հաւասարութեան և ընկե-
րասիրութեան դէմ գայ:

Արդ թէ որ՝ Պարիստոսի դրութիւնը ասոնք
են, ըսել է որ՝ Նորա օրինաց քարոզվէները և
նոյն օրինաց գործադրութեան ջանացողները կը
պարտաւորին ճիշդ Պարիստոսի նմանից բանիւ
և ընթացքով, քարոզել միշտ սէր և հաւասար-
ութիւն և ընկերասէր մինել առանց քայլ-

ուութեան , որպէս զի հասարակութիւնը չետարակութեանց անկեղծութեան վերայ ինչպէս որ տարակուսեցան միներն երբ կատուն փիլոնով իրենց մօտեցաւ իրակ կրօնաւոր . ԱԵՐ կողմանէ կրօնաւորական գլխաւոր պարտականութեան վերայ այսքան խօսելով անցնիմք դարձեալ մեր բուն խնդրոյ շարունակութեան և աշխատիմք յայտնել թէ ԱՎԱՆՈՒԵԼ վարդապետը իրապէս կրօնաւոր մի է թէ ոչ կեղծ . ու հետաւ արար Քրիստոսի ընկերական սկզբունքներուն ներդործութիւնը կոտրող վարդապետ մը . ոյս կընեմք , ըստ որում մենք միշտ նախանձախնդիր եմք Քրիստոնէական բարոյականութեան և փափաքող նորա տարածման և աղգեցութեան :

Վըլիսառնէւական կրօնի և հիմնադրին պէս
հանդութեան շահն մեր նպատակն և ջշմարտու-
թիւնը մեր սիրոց մի միայն առարկան լինելով
այս վերջնոր կրցածնուս չափ պաշտպանելով
նպատակնուս համելու համար մենք այնքան
աներիիւղ եմք և քաջասիրտ՝ որ թշնամինս չէ
թէ Անոնէլ վարդապետ մը այլ նոյն խակ բե-
հեղերուդն թէ լինի, մենք տակաւին բնու-
թեան հզօր և անընկճելի սկզբնապատճառին
կրթնած կարող եմք պատերազմի և յաղթել
զայն և ամեն խաւարասեր թշնամիներն ջշմար-
տութեան :

Ալրօնական ժողովը կուղէ Մանուել վարդապետին կողմնակից լինի, կուղէ չի լինի, կուղէ զանի պատռեւ կուղէ պատճեւ .և Եւնի Գառըուի թաղական խորհուրդն ալ կուղէ նէ թողամեն Վիւրակէ օր Մանուել կամ ուրիշ վարդապետ մը մեզ և մեր օրագրոյ գէմք քարոզ տալու հրաւիրէ, մեզմէ տարի մը առաջ ընդունած իրաւացի հարուածին վեճն լուծելու համար, իսկ Մանուել վարդապետն ալ կուղէ նէ ամեն նստած, երած, կերած, խմած և քարոզի հրաւիրուած տեղերը թող մեզ և մեր Զայնին գէմ կոչէ, գուայ և որոտայ մենք տակաւին հանդարս սրտով պիտի քննեմք իւր բալր ըսածները և քարոզները և պիտի ձանցնեմք զինքը և իւր արժէքը ինչպէս որ եր ասկից առաջ և ինչպէս որ է հիմայ, կամ պիտի լինի ասկից վերջը.

Անուէլն՝ վարդապետ լինելով կը յարգեմք
իւր կարգն ու պաշտօնը, սակայն նոյն իսկ այս
իւր վերայ գտնուած պաշտօնին սիրոյն համար

պիտի աշխատիք որքան որ կարելի է յայտնել թէ՝ ինքն երբէք իւր կոչմանն արժանի չէ և թէ ինքն վարդապետ լինելու համար քանի մը վարժապետներու աշակերտելու է.

Մէր այս վերջին խօսքին գեմ թէ որ Մանուել վարդապետը ուրիշ վարդապետաց ալ անարժանութիւնը մեղ ներկայացնէ, այն ժամանակը կը պատասխանեմք իրեն թէ՝ ուրիշ վարդապետաց անարժանութիւնը ապացոյց մը չէ թէ ինքն ալ անարժան լինի, և թէ ասի չե կը ռար զինքն արդարացնել.

Ճառողլով թէ Մանուել վարդապետն մեր Զայնին մէջ հրատարակածներնուս պէս քարոզ մը տուեր է թէ ոչ — վասն զի այս կէտա մեզի ստորագրութեամբ տեղեկութիւն տուողին կը վերաբերի՞ — սկսեմք քննել թէ ինքն այս կէտա պատրուակի բռնելով որքան հակառակ վարուեցաւ Վրիստոնէական բարոյականութեան և թէ քանի սխալ գաղափարներ տարածեց հասարակութեան, և գայթակղութեանց պատճառ եղաւ.

Յարունակելի:

ԱՐԴԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Այսափ երթալէն վերջը ալ արժան է քիչ ող կանկ առնել և նկատել թէ ո՞ւր կերթանք.

Ենոնք որ քառասուն տարեկանի մօտ կամ աւելի եղած են անցեալը միտքերնին բերելով կրնան վկայել թէ ինչ ձիարշաւ ընթացիւք կը նախանք: Ես չեմ կարծեր որ Եւրոպական փայլուն ազգերը քառասուն տարեկան միջոցի մէջ այսափ փոփոխութեան ենթակայ կը լան կամ եղած են: Քայլ ամենքս ալ խոնարհաբար խոստովանելու ենք թէ աս արագ ընթացքին մէջ, մեղ մղողը ոչ այնչափ հասուն խորհուրդն է, որչափ նմանողութիւնը նմանողութիւնը որչափ կապիկին՝ այնքան ալ մարդուն բնական է, և մարդուս մոքին աս տրամադրութիւնը մեծ օ-

* Անձերնուս պարտք կը համարիմք իմացնել մեր ընթերցողաց թէ Մանուել Վարդապետն իրօք, «Ասուած Քրիստոնեաները անողորմաբար պիտի դատէ ու պատմէ» ըսեր է ինչպէս որ բամիւ մեղ իմացոցին արժանահաւատ անձննք. անողորմին մեծըն այն է որ Աստուծոյ վերայ անողորմութեան դաղափար կը տարածէ.

գուտներ ունի անոր ընկերական յառաջադիմութեանը, որմէ մենք ալ շահուած ըլլանիս խոստովանելու ենք. բայց ասկէ բարձր կարողութիւն մը մըն ալ ունի որ կապիկը չունի, այն է, նմանողութեան հետեւելն առաջ կամ վերջը խորհիւ ու գատել ընթացքին վրայ. ինձի կերեայ մենք մինչև հիմայ աւելի վազեցնիք քան խորհեցանք, ասիկոյ հայկական ողիին բնական չէ. Հայք կրթութեան սկսենին շատ հիմուց է, իսկ այսօր յետադաս գտնուելնուն մէկ պատճառն ալ ոչ իրենց գանդաղամիտ և անզգայ ըլլալը, այլ աւելի խորհելքան ընթանալու ըլլանաւորութիւն է. անաչառութիւնը և խոհեմութիւնը հայուն թող չեն տար նմանողութեան շատ հետեւելու. բայց մօտ տարիներս կարելի է ասկէ քիչ մը շեղած է. անանկ որ հայ ուսումնականաց շատ գրութիւնները անդամ որ կերեի թէ ժողովուրդին ընթացքին վրայ խորհուրդ և դատողութիւննեն, նմանողութեան մէջ արագ արշաւանք մը կը սեպեմ. վասն զի գիտութեան տուած յարգերնին և անոր ընելիք օգուտաներուն յյսերնին Եւրոպական գրութիւններուն նման է, կարծես թէ աւանց մալթիմալթիքա և քիմիաբանութիւն գիտնալու մարդ ոչ կրնայ ասլիլ, ոչ սրտի ուրախութիւն վայելել և ոչ յաւխենական կեանք. Դարձեալ անոնցմէ շատը իրենց գրութիւններով ժողովուրդին ստիպում մը կու տան աւելի արագ իրենց հին սովորութիւնները ձգելու և արդի քաղաքականութեան հետեւելու. Ասիկայ նմանողութիւնն է ուստի քննելու է թէ արդեօք այսչափ աճապարելու պատճառ ունինք նոր քաղաքականութեան մը փոխուելու:

Երկրի վրայ մարդուս երջանկութեանը համար քանի մը պայմաններ կան ասոնցմէ ումանք նախական և առաջին կարեռութիւն ունեցող են և մէկ քանի ալ երկրորդական. նախական պայմաններն են նախ՝ առողջութիւն, որ առանց ասոր ոչ երջանկութեան միջոցները կիմայ մարդ ձեռք բերել և ոչ ձեռք բերուածները վայելել: Երրորդ՝ ապրուստ որ ասոր պակսութիւնը մարդու անընդունակ կը լինէ որ և իցէ օգտակար գործի և հաճոյքի թէ նիւթական և թէ բարոյական, և մարդկային սրտին ցանկալի եղած բաներուն ամենէն դլխաւորին կործանումը կը լավագույց, այն է կեանք. Երրիրորդ բարոյականութիւնը որուն պակսութիւնը մարդս գաղափար կը տարածէ.

զաններուն կը մօտեցընէ և ոչ միայն ունեցած
առողջութիւնը և ապրուսոր խաղաղութեամբ
և սրտի գոհունակութեամբ չը կրնար վայելը լ.
այլ և բոլոր վայելքը նիւթական և ցանկական
ըլլալով հասարակ և անասնոց և մարդուն յա-
տուկ եղած բարձր երջանիութեան անրնդու-
նակ է : Ուստի յայսնի որ մարդուս երջան-
կութեանը համար առողջութիւն , ապրուսո-
և բարոյականութիւն անհրաժեշտ են : Երկ-
րորդականներն են նախ՝ ուսմունք , որ մարդ-
կային մորքն յատուկ եղած երջանիութիւնն է
որ կրկայանայ Պատուծոյ գործքերը կամ որ նոյն է
բնութեան տնօրէնութիւնները զննել , և զմայիլ
ու մաքի մշակութիւն լրւասաւորութիւն ստանալը
Երկրորդ ազատութիւն . աղասութիւն քաղա-
քական իշխանաց բռնակալութիւններէն , աղա-
տութիւն կրօնականաց խարէութիւններէն , ա-
զատութիւն հասարակութեան համբաւէն ,
Աղուալարութիւնները մարդուս անձին և ստա-
յուռածքին կը տիրեն , կրօնականները մաքին ու
խորձն , հասարակաց համբաւը մարդուս զբաց-
մանցը :

Թե՛ անկիրթ ազգաց մէջ, ուր իշխանաց
կամքը և ոչ օրէնքը կը տիրէ, չարաբարոյ իշ-
խան մը պատահած ատենը իր իշխանութեան
սահմանին մէջ ժողովուրդին վրայ կը բռնանայ
և անոնց երջանկութեանը արգելք կը լուսոյ պատշ-
մութիւնն ու աշխարհադրութիւնը կը ցուցը-
նէ: Իսկ կարգաւորաց խարէութիւնները իրենց
հաւանող ժողովուրդին երջանկութեանը ար-
գելք ըլլալը զիւրին չէ տեսնելը, ասոր աս կեր-
պը կառաջարկեմ: Թող ամեն ժողովուրդ իր
ուղղափառ սեպած կրօնքէն դատ միւս կրօնք-
ներուն վրայ նայի, և հոն կը տեսնէ անոնց ամեն
մէկուն խարէութիւնները, այսպէս այնքան խա-
բէութիւններու վրայ տարիներով փաստաբաշ-
նութիւն ընելու փոխանակ մէկ խօսքով կը լը-
մբնայ, կը մնայ միայն իրը, ան ալ բացառու-
թիւն կը սեպենք և կանցնինք յաջորդ ժողով-
ուրդին, ու հոն ալ անորը բացառութիւն սե-
պելով, առաջնին խարէութիւնները ընդունիլ
կու տանք որ եթէ միւսին հետ տարի մը փաս-
տաբանենք, չէնք յաջողեր, այսպէս ամեն ժո-
ղովուրդի կրօնանք ցուցընել թէ կրօնականաց
քարոզութեանցը մէջ ուրան խարէութիւններ
կան, մերժ գիտմամբ մելթ անդիտութեամբ:
ասիկայ արամաբանութիւն չէ փաստ չէ, միան-

ճամբայ մը օգնութիւն մնն է, որ եթէ մէկը կարող է միորով կարգաւորաց խումբերուն դաշտէն հեռանալ և բլուրի մը գագաթէն անոնց վրայ նայիր կարող կըլլայ ուղիղ գատում ընել. բայց քանի որ ան խումբերու մէկուն կըցուած կը մնայ, ինչդիբն մէկ կողմը միայն կը տեսնէ, որ արդի ոճով նախագաշարում կըսուի. և նոյն պատմութիւնը ու աշխարհագրութիւնը կը ցուցընէ ժողովուրդին երջանկութեանը եղած արգելքը աս կողմէն, կարծեմ աս կառավարութենէն եկած զբկանքէն մեծ եղած է. վասն զի եթէ կառավարութիւնը բռնակարութիւն ընէ, ժողովուրդը կառնէ անիկայ իրեւ բռնակարութիւն. և իշխանին ու ժը ժողովուրդին համարումէն կախեալ է. իսկ կարգաւորին խարեւութիւնը ժողովուրդը իրեւ Աստուածային անօրէնութիւն կառնէ. և անոր ազգեցութիւնը իր վարքէն այնչափ կախում չունի, որքան ժողովուրդին համոզումէն, որ ժողովուրդին անկիրթ վիճակին մէջ դիւրին է համոզել թէ ինքը Աստուածէ առած է իր իշխանութիւնը և ժողովուրդէն կախեալ չէ. Իսկ հասարակաց համբաւուն ազատութիւն է երջանկութիւն որչափ հարկաւոր ըլլալը մէկ մարդ մը շուտով կիմանայ, երբ ինքը թէ զիւղացի ըլլայ թէ քաղաքացի, քանի մը տարի մեծ քաղաքի մը մէջ բնակելէն վերջը, երթայ գիւղի բնակիչը ըլլալու աշխատի, անվիշապէս կը տեսնէ թէ քաղաքի մէջ եղածէն տասնապատիկ աւելի իր ամեն գործքերը հասարակաց յայնի և անոնց դատմանը ենթակայ է, թէ և աննիատ և անտարբեր ըլլայ հասարակաց կարծիքին, շուտապ պիտի աեսնէ որ իր առաջնակազմութիւնը հարթառութիւնը խղճին մաքսութիւնը իր ունեցած գիտութիւնները քաղաքական և կրօնական օրինաց գեմ չըլլալը բաւական չեն իր երջան կութեանը համար, առանց աղեկ համարումի մը հասարակութեան մէջ պիտի տեսնէ որ հասարակաց համբաւը կը տիրէ իր գաղափարներուն, խղճին; իր ընկերական դդացմանըը, կը բօնքին, և ամեն գործքերուն թէ կարեւոր և թէ աննշան, ասիկայ աւելի մանկանան կը դնէ իր վարքը քան կառավարութիւնը և քան կարգաւորները, և անոնց չհնազանդիլ երբեմն հընարէ, բայց ասո՞՛ ո՛չ երբէք, պիտի տեսնէ թէ ճշմարիտ գաւանելու է ոչ ան որ ինք ճշմարիտ կը դատէ, այլ ինչ որ հասարակութիւնը այն-

ուես կը դատէ . իր զգացումներէն , միայն անոնք յայռնելու և գործադրելու որ հասարակութեան համաձայն է . միւսները որչափ ալ իրեն ցանկալի ըլլան , արտօնութիւն չը կայ ոչ յայտնելու եւ ոչ ըստ այնմ գործելու . հասարաւ կութիւնը պիտի որոշէ թէ ինչպէս պիտի վարուխ ընտանիքիդ հետ ու ինչպէս գրացիիդ հետ , տան մէջ և դուրսը ընելիք գործքերդ , ինչ հագնելիքդ և ինչ ուտելիքդ , ևայլն , ևայլն .

Շաբանակելի

ՄԱՐԴ ԵՒ ԲԱՐԲԱՐՈՍՈՒԹԻՒՆ

Վարդս ընդհանուր ընկերական օրէնքներուն անտեղեակ գտնուելովն չէ թէ միայն իւր նմանները հարստահարելու ընթացք մը ունի , այլ նաեւս մարդէս ՚ի զատ անթիւ խեղճ արարածներու արեամբը իւր կատաղութիւնը կը յագեցունէ . նա օրէնք և արդարութիւն չի գիտեր ամեննեւին , այլ այս բառերը կը գործածէ լոկ իւր վայրագ կրից առջեւ վարագոյր մը ունենալու համար :

Վարդս իւր դցութեան առաջին օրէն սարսափեցուց կենդանական ընկերութիւնը , գըղըրդեց նոցա բարեկարգութիւնը և Բարելուեան խառնակութիւն մը ճգեց նոցա մէջ , վասըն զի մինչդեռ կենդանիք սիրալիք և երջանիկ ընկերականութիւն մը ունին , մարդս կանդանեցաւ նոցա մէջ և սկսաւ անոնց ամենէն փոքրը և ամենէն մեծը վարատել և զիշատել , և իւր այս ընթացքը այնքան յառաջ տարաւ որ կենդանիք շուտարեալ բաժնուեցան մէկզմէկէ և սկսան ՚ի դործ գնել մէկդմէկու վերայ այն դասը որ մարդս իրենց ուսուց , և ահա այն օրուենէ հետէ չի դատարեցաւ կենդանական աշխարհին կոտորածը և դադարելիք ալ չունի եթէ մարդս յարատեւէ իւր այս անվայել ընթացքին մէջ և իրաւունք բառին որովն նշանակութիւնը տայ :

Վարդս պարափ ուսանիլ թէ ինքն բուսակեր կենդանի մի է , և թէ իրեն համար բուսական աշխարհէն գուրս կերտկուր և մնունդ փնտուելու ամեննեւին իրաւունք չի կայ , և ինքն այնքան աւելի պիտի պատժուի զանազան ախտերով , հիւսնդութեամբ և վարտհաս մահուամբ որքան որ ինքն շարունակէ իւր որովայնն

լեցնել Բուսական աշխարհէն գուրս գտնուած կենդանիներով , հանքերով ևայլն :

Բնութիւնը մարդուս ծամելու և մարսելու գործարանները միմիայն Բուսականներէն սընունդ առնելու յարմար յօրինած է , և որքան որ սխալ նոյնքան ալ յիմարական սկզբունք մըն է այն որ կը փաստաբանուի թէ մարդս որքան որ բուսակեր նոյնքան ալ մասկեր կենդանի մի է և թէ իւր ծամելու գործարանները առջնին չափ վերջնին ալ յարմարութիւն ունին :

Բժշկական հրատարակութիւնները որ միշտ կը ջանան հաստատելու թէ՝ մարդուս կազմութիւնը բուսական և կենդանական կերակուրներ ուտելու յարմարութիւն ունի , բոլորովին զուրկ են համոզիչ փաստերէ , որոնց հակառակ աշխարհիս ամեն բնազինները միաբերան կը հաստատեն թէ՝ մարդուս մարմինին կազմական չէնքը բաղդատելով ուրիշ կենդանեաց հետ կը յայտնէ թէ՝ մարդս բուսակեր կենդանեաց դասին կը վերաբերի և բնաւ նշան մը չունի մասկեր լինելուն :

Պարոն Վուլփը որ կազմաբանից մէջ առաջին տեղն ունի և մարդուս շէնքին նայելով նուրա բնական կերակուրը պտուղներէ , արմատներէ և բանջարեղիներէ կը բաղկանայ , զորոնք հաւաքելու համար խիստ յարմար են իւր ձեռքերն ալ և կրսէ :

Լորինօ՝ բժշկականութեան երեւելի դասասուն կը հաստատէ թէ՝ « Վարդուս ակուները ամեննեւին նմանութիւն չունին մասկեր կենդանեաց ակուներուն » :

Թագմաս Պէլ կըսէ և մարդուս կազմութիւնը կը ցուցընէ թէ՝ նա առաջ բուսակեր կենդանեաց դասէն եր » :

Այս լիվերարտ Հոմի կը յայտնէ թէ՝ « մարդը իւր անմեղութեան մէջ միայն բուսականներով կը մնանէր » :

Լուս Վոնագուտո՞ որ հոչակաւոր բնազին մըն է , կըսէ թէ՝ « մարդս իւր նախնական վեճակին մէջ բուսակեր կենդանի մըն է , իսկ իւր մասկեր բնութիւնը ստացական է » : Վնդղից Բժիշկ Վիլամ Լամբ քառասուն տարի այս կէտս քննելով հրատարակեց թէ՝ « մարդս բուսակեր կենդանին մը կազմութիւնը ունի , և միայն գատուղութեան և կիթութեան պակասութիւնն է որ զինքը մասկեր փոյտինի մը ըրած է » :

Օմնուոց առաջին դիրքին մէջ կը կարդանք

որ երբ մարդս ստեղծուեցաւ, իւր կերակուրը հետեւեալ կերպով սահմանուեցաւ և և Վասուած ըստ, ահա ես տուի քեզ ամեն սերմ ունեցող կանանչեղենները, որ կը դանուին երկրի վերայ և ամեն ծառ որ պառուզը սերմ ունի, ԱՍՈՒՔ ՔԵԶԻ ԿԵՐԱԿՈՒՐ ՊԻՏԻ ԼԻՆԻՆ ո, արդարեւ ասկից աւելի ընտիր խօսք մը չել կինար գտնուիլ հաստատելու համար թէ մարդս ի՞նչ պարափ ուտել.

Արսուի թէ ջրհեղեղէն վերջու ազատութիւն տրուեցաւ կենդանական կերակուր ուտելու, սակայն ինձ համար ասիկայ խիստ անբարզյա կան իրողութիւն մը կերեւայ, վասնզի ի՞նչպէս հնարաւոր է որ Վասուածոյ մէկ ՀՐԱՄԱՆԸ, իւր մէկ ԱԿԱՐԱՆՆԵՐ տիարանայ :

Վասակերութիւնը Վասուածաշունչով հաստատողները՝ ԾՕՆՆԴՈՂ իններորդ գլխուն 2. 4. համարները յառաջ կը բերեն այսպէս և ձեր սոսկումը և երկիւզը երկրիս բոլոր գաղաններուն, օդին մէջի ամեն հաւերուն, երկրիս վերայ ամեն շարժողներուն, ծովուն մէջի ամեն ձու կերուն վրայ պիտի լինի, ամեն շարժող բան որ կապրի ձեզի միս պիտի լինի, մինչեւ անդամ կանանչեղենի նման ամեն բան ես ձեզի տուի, բայց միայն կենդանի այսինքն արիւնով չել պիտի ուտելք ո.

Վասուածաշունչին այս խօսքերը թէ որ մը սակերութիւն պաշտպանողներուն մեկնութեամբը առնումք պիտի պարտաւորիմք հաւատալ թէ Վասուած իւր այս թոյլտուութեամբը մէկ ուրոշնապատակ մը ուներ, այսինքն բնաչինչը ընել բոլոր իւր արարածները, վասն զի յայանի է որ այսպիսի կոտորածի մը միմիայն արդասիքը ուրիշբանչէ, այլ միայն բոլոր բնութեան օրէնքները եղծելով աշխարհս սարսափելի հիւանդութիւններով, ախտերով և կոտորածով լցցնել, վասն զի մարդու որ բուսակեր կենդանի մըն է իւր կազմութեան ամեն պահանջմամբը, չել կը նար երբէք ամեն շարժող կենդանիները, կամ մինչեւ անդամ մէկ որոշ տեսակ կենդանինի մը միար ուտել առանց եղծելու իւր կենդանականութիւնը. իսկ մեր այս ըսածին իրեւ անհերքելի ապացոյց կրնայ ներկայանալ մարդկութեան արդի թշուառ կեանքը՝ որ հազիւ թէ կեանք կոչուելու արժանի է*. վասն զի մարդ-

կային սեռին ամենէն փոքրիկ մանուկէն սկսեալ մինչեւ չափահամները միշտ անվատահ են ապրելու, և այս չարիքը այնքան յառաջացած է որ ռամկութիւնը բոլորովին մոռնալով թէ՝ Վասուած գահիք և ըրածը ըրածը չել գիտցող մէկը չեանկըն ու մահը Վասուածմէ կապասեն :

Բայց Վասուածաշունչը վերօգրեալ թշուառութիւնը եթէ ուզել մարդկարեւ պիտի գանեմք որ մարդկային ազատութիւնը թէ ջաստասուած է, և թէ Վասուած նոյն խօսքերը աւելի վատով կը խօսի քան թէ իբրեւ իւր կամքը, վասն զի թէ որ իւր կամքն այպէս լինէր, որ մարդս ամեն շարժող կենդանեաց միար ուտելք . չէ թէ միայն կը պարափառուի մարդկային կազմութիւնը փոխելու և մասկերութենէն յառաջացած ամեն ցաւալից հետեւանքներն գագրեցնելով՝ այլ նաեւս Իրեն այդ բացարձակ թշոյլուութիւնը Վովսիսի բերնով չէր պարտիր փոխել, կենդանեաց մէջ զանազանութիւն դնելով. Վասուածոյ գործքերը անհուն են և անքնների. միայն թէ մարդս պարտիր որոշել Կորա ՀՐԱՄԱՆՆԵՐԸ ըրած ՇԱԿԱՐԱՆՆԵՐԸ. Վասուածոյ մեր նախածնողաց տուածը ՀՐԱՄԱՆ էր, որ էր բուսական ուտել, իսկ կենդանեաց միան ուտելու տուած պրանութիւնը ՇԱԿԱՐԱՆՆԵՐԸ էր. ի՞նչպէս որ Կիքն կենդանեաց ցեղէն ուտառելիքը և չուտուելիքը Վովսիսի բերնով որոշելէն վերջը Պիետուրոս Վապեալն ամեն տեսակ կենդանիներ ներկայացուց ուտելու համար, մինչեւ անդամ Պաւր պիդղ կոչած կենդանիները .

Վասուած այս տեսակ շատ ՇԱԿԱՐԱՆՆԵՐԸ ըրած է, սակայն պէտք է գիտնալ որ Կորա ՀՐԱՄԱՆՆԵՐԸ հաստատուն են և անփոփոխելի. Կապատուիրած է չել ստել, այլ սակայն կը կարդամք Վասուածաշունչը մէջ որ թէ Եղիպատուի գահեակները և թէ Եղիքովի պոռնիկը վարձատրեց սուտ ըսենուն համար, գողութիւնն ու յափշտակութիւնը արդիկեց սակայն Իրաշելացւոց ալ ՇԱԿԱՐԱՆՆԵՐՆ ըրաւ որ Եղիպատու-

ժանի երբ զինքը մնուցանող հիւթ չի մնար, կեանքը այն ժամանակը կեանք կոչուելու արժանի է երբ նա իւր բնական տեւողութիւնը անփոռով կը վայելէ. ամեն բնազին կը միաբանեն թէ՝ մարդկային կենաց բնական տեւողութիւնը մինչեւ մէկուկէս դար պարտիր լինիւ :

* կեանքը ճրագի նման այն ժամանակը կը բա-

ւոց ամեն ծանրագին հարստութիւնները կողպատեն հրամայեց շնութիւն զընել բայց Ապարագարէին մէկին ալ պատուիլեց որ բող կին մը առնու և այլն և այլն և այլն :

Ասակերութեան սկզբունքը պաշտպանողները լաւ կընեն թէ որ խորհին թէ Աստուծոյ վերոգրեալ բայլուուննէն մէջ սա ալ յիշուած է որ կինդանեաց արիւնը չուտեն շատ լաւ, բայց ասիկայ հնարաւո՞ր բան է, կարելի՞է մէկ կտոր միս բոլորովին զատելիւր արիւնէն . Այս կարելի է քիմիական գործողութիւններով . բայց ան ատենն ալ աւելի ընտիր կերակուր մը կը լինի սպունքի մը կտորը քիմիական գործողութեամբ իւր արիւնէն զատուած մնի մը քով ուրեմն ի՞նչ ընելու է, Աստուած թողուտուութիւն ըրաւ որ միս ուտենք, բայց արիւն ուտելն արգիլեց, և որովհետեւ մեղ համար խիստ գժուարին է միսն բոլորովին արիւնէն զատել, և կամ բոլորովին արիւնազուրկ միս ուտել ուրեմն ըսել է որ միս պէտք չէ որ ուտենք :

Բնազընները քննած և գտած են որ մասկեր կինդանիք՝ բուսակեր կինդանիներէն շուտ կը փտտին . մեռած գայլ մը նոյն վայրկիննին մեռած ոչխարէ մը շուտ կեղծուի և կը փտափ բուսակերներուն արիւնը մասկերներուն արիւնէն խիստ շատ շուտ, մաքուր և առողջ կը լինին . նոյնպէս և մարմինին ուրիշ հեղուկները բուսակերները մասկերներէն աւելի ուժեղ կը լինին աշխատութեոն, գիպուածներու, պաղետաքի, քաղցութեան և ծարաւութեան աւելի կը դիմանան . ասոնց ակռանները ամենեւին չի եղծ ծուրի, և չունին այն գարշելի բերնի հոտը որ ունին մասկերները. բուսակերին ախորժակը միշտ առողջ է, քանի որ մասկերք ինչ ուտելնին կը կորանցունեն . բուսակերը իրենց կերածը կը մարսնան առանց վրդովմունքի . ջերմութեան, գրգռման և ստամոքսի ներդութեան, մինչեռ մասկերը իրենց ամեն կերակուրէն վերջը կը թուլնան, զլուխնին կը ծանրանայ և այլն որոնք տեսակ մը հիւանդութիւնք են . բուսակերաց կիրքերը բարեխառն են և հպատակ գատողութեան . ամենէն առողջ և առողջ կազմութիւնները բուսակերները կը վայելն, և ասոնք թէ որ հիւանդանան ալ շատ գիւրաւ կառողջանան . բուսակերները գեղեցիկութեան և վայել չութեան կողմանէ ալ միշտ կը գերազանցեն մը սակերներէն . վերջապէս այն ամեն օր հնու-

թիւնները որ մարդս կը փափաքի վայելել, բուսակերները կը վայելն առանց նեղութեան :

Հոս արդարեւ արժան է աւելցնել թէ մեր նախնիքները ամենամեծ իմաստութեամբ պահոց օրեր սահմաններ են մեր ազգին մէջ, որ պէս զի հասարակութիւնը բոլորովին մասկեր չլինի և բուսական կերակուր օդուտները վայելելն չի գրկուի, այս մասին յիրաւի երախտապարտ պարտիք լինել .



ՍԻՐԵ ՀԱՅԸ

Սիրէ Հայը թէւ ըլլայ աղքատ աղնանկ անկարող,

Վրան գլուխը հին ու մին, դռնէ ՚ի դուռ մուրացող,

Անունն է Հայ պարտ է մեզ,

Սիրել զնա Հայու պէս :

Սիրէ Հայը, թէւ ըլլայ հարուստ փարթամ մեծասուն,

Եւ ունենայ պէյ եֆէնտի կամ ամիրայ մեծ անուն :

Անունն է Հայ պարտ է մեզ,

Սիրել զնա Հայու պէս :

Սիրէ Հայը թէւ ըլլայ Հայրառուրը Տէրտէր Պարդապետ,

Վրան փիլոն ծոյը Սուրբ Խաչ, Կաթուղի կոսն իւր վարպետ :

Անունն է Հայ պարտ է մեզ,

Սիրել զնա Հայու պէս :

Սիրէ Հայը, թէւ ըլլայ Լուսաւորչական Պապական, Բողոքական . . .

Բատ քո կարծեաց Ճիշտ մնապաշտ հերետիկոս մարդադաւան :

Անունն է Հայ պարտ է մեզ,

Սիրել զնա Հայու պէս :

Վասն Հեղինակին .

Յ. Ս. ԳԻՒՐԳԱՆԻԱՆՕՖ



ԽՈՍՏՄՈՒՆՔ

Երբ սրտիս լարեր,
Հնչեն Սէ՛ր քաղցրիկ.
Զի՞ կուսին աշեր,
Ժըպտին ինձ հեղիկ.

Մինչդեռ իւր շվթունք,
Խօսիլ կ'ամաչեն.
Կարմրագեղ ծաղկունք,
Ծըլմն այտերէն.

Իւր ժըպտին մէջէն,
Մինչ խօսին զուարլժունք.
Կը բղիսն սրտէն,
Միլոյ վառ խոստմունք.

ՀԱՐՑՈՒՄՆ

Մայիսի 24^{րդ}օրն հասնելու վերայ Է. Սահմանադրութեան տարեդարձի հանդէս պիտի կատարուի թէ ոչ. Օտարները վրանիս պիտի խրնդացնեմ միարդեօյիշեալ հանդէսը այս տարի չի կատարելով:

ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ

ՀԱՄԱՐԾՈՑ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՇԽԱՌՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ

24 երեսներէ բաղկացեալ տետրակ միէ որ կը ծախուի ամեն հայ գրավաճարաց քով:

Պահն 60 փարայ.

Ա.Ա.ԶԻՆ ՄՐՄՈՒՆՁՔ

ՔԵՐԹՈՒՄԾՔ

Ա. Յ. ԱՅՎԱՋԵԱՆ

80 երեսներէ բաղկացեալ գեղեցիկ բանաստեղծական աշխատասիրութիւն մի է այս որ ապագային համար մեծ յոյս կու տայ երիտասարդ հեղինակին զոր խրախուսիլ պարտ է ամեն ծմնարիս ուսումնասիրաց։ Ալ ծախուի ամեն գրածախներու քով դին Յ զուրուշ։

Ա Զ Դ

Գօթօկրաֆ Պ. Կարապետ Պաղտասարեանը, կրկնն անդամ Ամերիկա գացած և Գօթօկրաֆիան (լուսանկարչութիւն) կատարելաւ գործած ըլլալով այժմ Մահմնւտ բաշայի վարի հողմը Սուլթան համամի ըսուած շուկան իլյամախողները զոհ ընելու չափ աժան և մաքուր պատկերներ կը հանէ առանց տիրոջը գըրաւոր հրամանին չծախելու և չկախելու, ամեն երաշխաւորութիւն ալ տալով։

Ինչ որ Խմբագրութեան եւ տնօրինութեան կը վերաբերի պէտք է ուղղել առ. Ա. Հայկունի, Պօլիս Մեծ նոր խան վերի յարկը թիւ. 2 : Օրագիրս կը հրատարակուի ամեն ամսոյ 4 ին 40 ին եւ 20 ին : Դին տարեկան 70 դուրուշ. վեցամսեայ 40: Գուրս երակիր օրագրաց ճամբուն ծախրդ առնողին վրայ։

Գաւառներու մէջ ունեցած գործակալներնիս են, Հայէպ Յ. Ս. Քիւրքճանօթ։ — Պարտիզակ եւ բոլոր նիկումիդիայի սահմանը Թորոս աղայ Մինասեան։ — Իզմիր Ծաղիկ Հանդիսի գրասենեակը։ — Կարին Պ. Պետրոս Մ. Օհնեցի, վերատեսուց Արշարունի ընթերցարանին։

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ո. Յ. ՔԻՒՄԲՃԵԱՆ

Հ ԿՈՍՏԱՇԵՐԵՈՎՈՒԽ, ՅԻՆՅԱՆՅԵԼԱՐ